110 «Ողորմե՛ ինձ, ողորմե՛ ինձ,

1. «Ողորմե՛ ինձ, ողորմե՛ ինձ,
Ո՛վ Որդի Դավթի, Քրիստո՛ս»,-
Այսպես կաղաչեր ճամփուն վրա
Կույր, աղքատ Բարտիմեոս:

2. «Լո՛ւռ կեցիր»,- ըսին շատերը,
Սակայն ան աղաղակեց
Անհամբեր, մինչև որ Տերը
Ձինք գութով իրեն կանչեց:

3. Չէր արծաթ անոր խնդրածը,
Թեպետ սովոր էր մուրալ,
Դավիթի Որդւոյն տվածը
Չէր կարող ուրիշ մը տալ:

4. «Տե՛ր, վերցո՛ւր այս կուրությունը,
Թող աչքերս բացվին»,- ըսավ:
Ծուտ տեսավ իսկույն և ինքը
Հիսուսի ետևն ընկավ:

5. Որչա՛փ սիրտն հիմա լեցուն է,
Ամենուն ալ կխոսի,
Այս ողորմությունն անհուն է,
Ի՜նչ Փրկիչ զարմանալի:

6. Երանի՜ թե Անոր քովը
Կույրերուն ամենը գար,
Ինք, անշուշտ, անչափ շնորհքովը
Ծուտ անոնց տեսնել կուտար: